որում ճանանչեմք հաւատին բնութիւնս մեր երբեմն ուրախ, երբեմն տխուր, երբեմն զայրացեալ և երբեմն զթած, երբեմն ցանկացող, և երբեմն հրաժարող և այլն. մի տացուք դանդանաւ անդս մեր 'ի ձեռին միոյ այսպիսի բնութեան ինքնակալ զի ճմլեսցէ զկզակս մեր ըստ կամաց և ըստ հաճոյից իւրոց, այլ արիացէք և զօրին խոհեմութեան ընդ մէջս ձեր ածցուք և հաստատելով կատարելապէս միտս ձեր՝ կացէք և մնացէք 'ի վերայ վիմի հաստատութեան և 'ի ներքոյ հարկի Օրինաց, որ ոչ ոք 'ի մէնջ երևեսցի ինքնակալ իշխան 'ի վերայ մեր և տէր 'ի վերայ աշխարհին մերոյ, այլ անդրադարձն սորայ եղերուք ամենեքեանդ հասարակ ազգաւ համահաւասար, իշխան և տէր և ժառանգ աշխարհին ձերոյ հնազանդ, միմիայն ձերոց Օրինաց՝ այն որ դուք ընտրեցիք և հաճոյ ձեզ թուեցաւ, և համեմատ բնութեան ձերոյ գտաւ, որում սկիզբ և մէջ և վերջնորին ցուցանէ բոլորովին բարութիւն հասարակաց։

Եթէ ես առաջանամ խօսիլ բան ինչ վասն անցելոյ ժամանակին, և 'ի պատճառէ ինքնակալ իշխանութենէ վնասուն, որ եղև 'ի վերայ մեր՝ հարկեսցի զիս որոնել 'ի մէջ բազում գրեանց պատմութեան, և ասացածս իմ եղիցի 'ի ականջս ձեր իբր լուր մի 'ի անցեալ ժամանակէ և ասողն իբր պառաւացեալ կնոջ բնականախօսի,